

Ը.

ԵՐԳԵՐ.

ԶԱԻԵՇՏԱԿԱՆ ԵՐԳԵՐ *).

I.

Խորաքայ բարբառով 1)

Քաւորոջ օլվարն էր նղուն,
Սանամօր միզարն էր պթաղըթուն.
Եղի աման կուրիսին պիսպիրուն:

*) Զաւեշտական երգերն բազմաթիւ են. ընդհանրապէս գութան վագելու միջոցին կերպեն, շատ անգամ եւս պարի. հանդէսներու մէջ. Սոյն երգերը, որ ամեն գաւառ ունի իրեն յատուկ զաւեշտական երգերը. նաեւ օր յօրի կաւելանան ու կը կոկուին. Շատ տեղեր կարծես հայ ժողովրդիան քնական սովորութիւն դարձած է իրար պարսաւել, նա շատ անգամ միակողմանի կը տեսնէ. հանդէպինի աւելի վատ կողմերը կը տեսնէ. առաւելութիւնները առ ոտն կը կոխէ. բաւական է ամենափոքր թերութիւն մի տեսաւ. մանաւանդ եթէ ցեղական ատելութիւնն եւս ունեցաւ. հետեւեալ օր զաւեշտական սոտանաւոր մի կը հնարէ ու կերգէ. Առ այս անհաշիւ են ծաղրի երգերն. շատ անգամ անբարոյական նախաղասութիւններով յերիւրուած, որ զրի առնել ամօթ կը բերէ. սակայն կարծես թէ այդ տեսակ երգերն աւելի հնութեան կնիք կը կրեն. Դիլղացին մի ուրիշ գիւղացու վրայ. զաւառացին մի զաւառացու վրայ կը յերիւրէ. եթէ մին գանուած է մի ուրիշ գիւղ կամ զաւառ. այդ տեղ մի անձէ յարգ չէ գտած. ամբողջ գիւղը կամ զաւառը կը պասաւէ.

1) Հետեւեալներն ասած է Քրսեցի Սարիրէղ (Արեւշատ).

—Քաւոր աղա՛, եղ տարան.
 —Սանամէր ջան դնրուեր տարան.
 —Զըմ զիտէր դորուեր տարան 1):
Քաւորոջ ջալալիքն էր թռու.
 Սանամօր լաշիկն էր ճռու ու մոռ.
 Սանամօր եղ տարան, խանին ի Բոռ:
 Քաւորոջ նզման էր դռմայ,
 Սանամօր պսկերն էր պուռմայ.
 Եղ տարան, առան խուրմայ:
 Քաւորոջ օլուարն էր թուխ,
 Սանամօր ծամերն էր բուխ,
 Կտրեցին սանամօր խացն ու ծռւս:
 Մառնի վրէն թալած գերան,
 Խանին, եղի ճռէն տարան,
 Տարան, խսուցին թաղչու բերան:
 Մառան քակեցին, էրին բակ.
 Ծներ էկած՝ կուտեն լակ,
 Եղի ճռէն տարին, խանին քաղաք:
 Սանամօր դռներն էր Սալրկուն.
 Քաւորոջ նզմաքն էր խըտիըտուն,
 Սանամէր եղաւ իմաստոն.
 Թէ քաւոր եղ ապրեր ա ուր տուն:

*.
* *

Զ Ա Ր Բ Օ Լ Օ Ճ Ի Կ.

Դու զար. բօլօճիկ 2), զար,
 Տղէն տուն կուլայ.
 Կիլայ, թըխ լայ.
 Կը մեռնի, թըխ մեռնի.
 Դու զար ու ես խաղամ.
 Իմ կուլ ու ենաերիմ:

Զարկ, բօլօճիկ, զարկ.
 Դոր մի խաղամ կս.
 Ճաշիկ, դու պաղի.
 Մինաս, դու քաղի.
 Մարան, դու լացի.
 Խմոր, դու քացլի.

1) Սոյն երեք տողերն ամեն տան վերջ պիտի կրկնուի.

2) Զարբօլօճիկ ճանճի նման միջատը, որ օդի մէշ կը բզզայ մի տեղ եւ յանկարծ մի ուրիշ տեղ փոխուելով կը բզզայ, այսպէս շարունակ. այս բզեզին կը վերագրեն խլանեցիք ճպուռին ու մըշիւնին առակը, Խաղալու եւ շատախօսութեան սովոր կինն հնձուոր Մինասին պաշար տարած միջոցին կը տեսնէ զարբօլօճն. հացը կը դնէ գետին, կը խաղայ,

Քոլօծիկ, դու զարկ,
Սարակ, դու սոված կաց, | Ալեւ մտաւ,
Մինչև իրկուն դինիչիւ.

*
* *

ՄԿՆԵՐՈՒ ԹԱԴԱՒՈՐ.

Բարեկմներ մեր քեմ խարցուցին,
Քեմ չկէր, ճժեր նստան, լացին.
Խաց չկէր, թունիր վառեցին.
Պառակ դրին, խարճկաթ կուրիսեցին:
Գացինք, դուռ ու դրկեց ժողուեցինք,
Խարճկաթ գտանք, խոփ մը շքեցինք.
Էն խոփէն խերկ մը լըջեցինք,
Էն խերկի մէջ ցորեն ցանեցինք,
Ցորնի յաբով ամպար մը շիքեցինք:
Մկներ լսեցին, ամպարը ծակեցին.
Մէջի ցորենը առմատադան էնեցին,
Գացինք, իրեք թագաւոր ասկար բերինք.
Մկներու մեծ թագաւոր բռնեցինք:
Դանակ սրեցինք, զթագաւոր մորթեցինք.
Կացին բերինք ու ջարդեցինք.
Կշեռք դրինք ու բաժնեցինք.
Գլուխ ու գագաթ—ճամբիսինք նույմաք.
Ինչ օ բասին—տուինք հարսին.
Վզի կաշին, ճամբիսինք փաշին.
Ինչ օ պլորին, տուինք մօլին.
Ինչ օ վզին—տուինք դազին.
Ինչ օ վլէժ—տուինք դանկրէժ.
Ինչ օ կողին—տուինք աղի տղին.
Ինչ օ շիշին, տուինք հեշիսին.
Ցնին ու մննին (աղիք ևն) — տուինք խարունին.
Ինչ օ բլին—տուինք բուլին.
Ինչ օ փէճին—տուինք Մկրտչին.
Ինչ օ փարին—տուինք Միրախորին.
Ինչ օ միջաց—տուինք Խեշաց.
Ինչ օ յետին—մնաց ի գետին.
Բերինք, բարձինք բալաք ճետին.
Ուը ու փղուը (աղիք մաղիք) փարա խզուը,

ինչ օ յակնճին—դրինք կարմունջին.
 ինչ օ դօշին—տուինք Սիափուշին.
 ինչ օ օտներուն—տուինք խոտղներուն,
 էնոր սրտիկ—տուինք Մրտիկ,
 էնոր նիկար—տուինք նիկեար.
 ծամբխինք Բոհղանայ քրտին.
 թաժնեցին ուրանց մանտը, բէտին.
 թրդուն մը էւելցաւ, ընկաւ գետին,
 Մկներու ձգեր մէջէն յէլան.
 Վըր քրդերու գանգատ կէրթան.
 Փաշի մօտ գանգատ էրեցին.
 Քրդերու մէկ բերին, բռնեցին.
 Փոր ու փղուր բերին, ճղեցին.
 Մկներու թագաւոր միջէն խանեցին.
 Մկներ քածա ասկար էրեցին.
 Մկներ ու քրդեր իրար զարկեցին.
 Քրդեր զօմանլուն իմեար բերեցին.
 Զը մկներ լարեցին, հա լարեցին.
 Զը կարցան զը մկներ բռնեցին,
 Մկներու յարով զիսայեր բալնեցին:

* *

Քաշալ էլե կերթայ կանկառ,
 Շամ կուզայ խանկալ—մանկալ,
 Քաշլու գլոխ մանկալ:
 Քաշալօ բաշալամբն 1).
 Քաշալ էլե, կերթայ մանտակ,
 Քացէ, պրծե ընկե խանտակ,
 Պառտայ, չգտայ զանտակ:
 Քաշալ յելաւ ի տանիս.
 Քաշալ, վախենամ մըսիս,
 Օոկըր թափեր, մացեր միս:
 Քաշալ գացե կրտկի,
 Վախենամ գլոխ բռնկի,
 Քաշլու գլոխ դռնկի:

Քաշալ յելաւ գնաց ի յարտ,
 Ընդրա յապով աշխար մնաց մաք.
 Գլուխ թափեր՝ մացեր ա գագաթ,
 Քաշալ յելեր՝ գացե բանջար,
 Գլուխ չկայ մացեր ա նաշար,
 Հեքիմ չկալ, էնայ մէկ ճար,
 Քաշալ յելեր, կերթայ ի պրակ,
 Գլոխ չկայ, մացեր ա թագ.
 Մըջ խլիմին էղեր ա տռակ,
 Քաշալ յելեր, կերթայ ժախի.
 Ուրին դես—դեն կը ծախի,
 Վախենամ խըտ մէկին փախի,
 Քաշալօ բաշալամբն,
 Քաշալօ խազալամբն:

* *

1) Սոյն երկու տողն ամեն տան վերջ պիտի կրկնուի.

-Վալա իմ իրիկ քմպել ա,	Նախրի առէջ բըոբէժ ա,
Պիլա իմ իրիկ քմպել ա.	Կովու կաշին տուեց, առաւ զեռ-
Նախրի յառէջ կել նա կել ա,	տալաւ
Կուվու կաշին տուեց, առաւ զեռ-	Վալա իմ իրիկ դօլագ ա.
Վալա իմ իրիկ հմդրէծ ա.	Պիլա իմ իրիկ դօլագ ա,
Պիլա իմ իրիկ հմդրէծ ա,	Գլխու քոլող չորս կեագ ա,
	Կերթայ տներ, թան կուզալ!

2.

Վաճայ բարբառով *)

Էֆաց գեալնցան, մաքուց թացան,
 Պիրէք ուտեմ, լաճ եմ պիրե, լաճ:
 Թթու գեօրլմազդ, տարեկն է խաց,
 Տարէք, ուտի, քեած ի պիրե, քեած:
 Լաճու մօր ալ կարիցէք, թիւքեր կումա՞՝
 Լաճ եմ պիրե, լաճ, ոսկե պոչամ լաճ:
 Աղջկայ մօր ուլ կարիցէք, թիւքեր պակաս,
 Քեած ի պիրե, քեած՝
 Լաճն էր աղա, լաճն ամիրայ,
 Խօրօս—մօրօտ—ոսկե պոչամ լաճ:
 Մշակներ դիւռ կը վըրվնջըն,
 Զիեր փըագեախ կը նըրբնջըն:
 Մէր լաճ դրե վէր ծնգեան,
 Զեռներ թըլե ոսկե պոչամ:
 Լաճու մօր կուժն ի լալա, կաթն արծուի,
 Մուշկով իլին, վարթ վէր պէլնին.
 Աղջկա մօր կուժն ի կաւէ, կաթն կուի,
 Կիտրմ անլուայ բուրթն ի պէլնին:
 Էսա լաճուն տուն շինիցէք, խօրն ի տարպաս,
 Էն աղջկան տուն շինիցէք, առիք պակաս,
 Էսա լաճուն ձին թամքիցէք, փօրն ջորի,
 Էն աղջկան գուստ իշուանք, նալեր պակաս:
 Էսա լաճուն ոսկէ մզրախ, նէտ մարգրիտ,
 Էն աղջկան սև - սև անթըլոց, ծէրն ի պակաս.

*) Գրի առած է Ա. Հ.:

Էսա լաճուն նզմայ պիրէք, խէրն իմանայ,
էն աղջկան լակաշ պիրէք, իրես պակաս:
Էսա լաճուն ալ կարիցէք, փլեր արծաթ,
էն աղջկան օալ կտրիցէք, թիւքեր պակաս:
Էսա լաճուն գըաաը պիրէք խաւ, խորոված
էն աղջկան ագռաւակոս, սև դարէ խաց,
էրկնքեռվ աղած,
Խլոյենց խով թոնէք թխած,
Աղջկայ մօր կիրիցուցած:
Խաց գեարնցան, մաքուց թացան
Պիրէք ուտեմ, լաճ եմ պիրե, լաճ:

*
* *

Լաճու մօր տարէք տրտեր, ոեհան քեաղի, վարդ խոտոտայ,
լաճի պիրե, լաճ.
Աղջկայ մօր տարէք արտեր սոխ քեախնքի, քիթ կծկծայ,
քեած ի պիրե քեած:
Լաճու մօր քեահլան ձիանք, խետն էլ ջորի, էրթայ խէրանց,
լաճ ի պիրէ լաճ:
Աղջկայ մօր գոռոտ իշանք, թող պոչ զնի, մրէն ծծղանք,
քեած ի պիրե քեած:
Լաճու մօր շաքրէ շարպար տուէք, իսմի, սիրտ քեաղցրանայ,
լաճ ի պիրե լաճ:
Աղջկայ մօր սիմնդէ վոխի էփէք, ուտի, թող համ զնի, թող
հոտ զնի,
քեած ի պիրե, քեած:
Լաճու մօր այվան, օթախ, պատեր չինի, թող մէջ քըենի թող
խով ընի,
լաճ ի պիրե լաճ:
Աղջկայ մօր տարէք փակեախ, պատեր կու ի, թող մէջ քըենի,
քեած ի պիրե քեած:

Յ.

Մոկաց բարբառով *)

Աշրանեկ էն օր ինչ քեաղախի ապէն վըր ձի էր 1),
Պիսերով ոչքներ օտքերս էր,

*) Գրի առել է Ա. Հայկունի. Ասել է Խումիապումախցի Քոչոն. բայց սովորած է Մոկացիներից եւ բարբառն էլ Մոկացիների նման բաւական լաւ հնչում է.

Մազէ ոլուար վրէս էր,
Թրեծ քեօլով գլոխս էր.
Դիարսպաքը եազմներ պարոր փաթերի,
Սուկան մախաթ, ասեղ փողպատսի կը պլպստէր.
Չանթէն թամերիմ թե,
Խէծայ պիրիակայպուճ (ջորի),
Գեացի իմ անըրոջ դուռ,
Ջուխտմ ի զանկու դըարկի.
Իմ աներ ասաց.
— «Ճնաւեր, քեանիմ գեօրով, գեառփով իս իկի իմ դիւռ»:
Գեացի նստայ մըջ քինի, մըջ քինիկալ,
Դեխո—դեխանց պիրած էն կորեկէ խաց.
Կը լցին իմ չանթէն.
Ես քեանիմ կը խոռանի.
Էս օր խալիւորցեր իմ
Մարդ իմ իրես չիրիշկայ:

*
* *

Երեւանա գուգեամ. հօյ նարմնայ,
Նախուն ապէն թեքերս էր. հայ նար, նարմնայ
Միած չոմախ ձեռքս էր. հօյ նարմնայ
Դուժ հոլոգ գըլօխս էր. » »
Բըալաք փուշն կապած էր, » »
Կարմիր զըմէք օտքերս էր, » »
Պարակայպուշ. տակս էր, » »
Գեացի, կայնայ եամրոջ դուռ, » »
Եար ձի տառ թռաւ, դիւս, » »
Իմ կարիպ խօքին խմրցուց, » »
Իմ չեղնի քնիմ քեօ ծուց, » »
Իմ պարակսալուջ քաշը քալւըն,
Մէյ խուրձ եօնջայ թըցի ըառչիւ,
Գընացի անիրոջս տուն.
Բարըւ տուըցը, պարիւս տուըցն.
Զանքախ թռաւ, կայնից.
Փաթուաւ վզովս, ասաց.—Օհան ջան,
Քեօ գեալած ճամբիսներին մեռնիմ,
Քեօ քեաննազբաւ բոյին մեռնիմ,
Քեանիմ գեաւ ու դըեռան իս էկի:

*
* *

4.

Վանայ աւանց զիւղի բարբառով 1)

(Մաճկալ իր սիրահար Գուլտանին վրայ երգելու միջոցին հացալաճառ Զմօն եկաւ. երգը դարձուց Զմօյի վրայ առ ի ծաղու)

—Ելեխ մելէխ Մուսի գոմէշ,
Զեռս թալիմ Աստծոյ փեօ.
Գուլթան թալիմ արտի բիար,
Ճիվան էկաւ, գնդերով եար.
Խաց կը թիսի թորուան պրկով,
Գուլտանէն չկայ ապրկի գրկով.
Կուէթաշար բանձրացուցին.
Փուտ փէտերով խեշրանցուցին:
Զմօն ունէր մէկ կուս էշ.
Էն ով կասի Զմօն ի գէշ.
Քար, կլիռ պատէն ի կախ.
Փլիթ կանի, թոնիր կանի:

Սօխոթան Սօխոթան չէր,
Սօխոթան պինթան էր.
Աստուած խոզոց չխանէր.
Սօխոթան պինթան էր.

Գութնի չէմպէր այնի կաշի,
Ենրօջ աքեր գարա գաւ ի.
Զմօն զայրացած կը պատասխանէ.
—Սայրակօլա չայիր—չիման,
Գարեխաց թալեցին մեյտան,
Թամրազի Մանուկ Աւանցի,
Աղ չկէր, բորակ թալեցի,
Նան լակաման ժաժիկ լցի.
Չում Սայրակօլ մէկ գնացի,
Գութնիներաց կիրիցուցի:

Սօխոթան լցին պտուկ,
Պտել էլան քանց տըտուկ,
Սօխոթան պիթան անլի էր.
Սօխոթան օրդներ էր 2):

* * *

—Աղջի, արե՛, քե օսկի առնեմ.
—Զեմ ուզեր բարօ, չեմ ուզեր խէրօ:
—Աղջի, արե՛, քե տալմա առնեմ.
—Զեմ ուզեր բարօ, չեմ ուզեր խէրօ:
—Աղջի, արե՛, քե տամ իրկան,
—Խան բարօ, Խան բարօ, օզօրմի քեօ խօրկան:
—Աղջի, արե՛, քե չամիչ առնեմ,
—Զեմ ուզեր բարօ, չեմ ուզեր խէրօ:
—Աղջի, արե՛, քե խնձոր առնեմ:
—Զեմ ուզեր բարօ, չեմ ուզեր խէրօ.
—Աղջի, արե՛, քե բու առնեմ.
—Զեմ ուզեր բարօ, չեմ ուզեր խէրօ:
—Աղջի, արե՛, քե տամ իրկան.

1) Ասած է Եղիսարէթ Կափաննեանց.

2) Այս երգը շատ երկար է. լսած եմ պարելու միջոցին.

- Խամ, բարե՛, ջան բարե՛, օղորմի քեր խօրկան,
 — Աղջի՛, արե՛, էրթանք գեարի քաղենք.
 — Չեմ ուզեր բարօ՛, չեմ ուզեր խէրօ՛:
 — Աղջի՛, արե՛, էրթանք ցորեն քաղենք:
 — Չեմ ուզեր բարօ՛, չեմ ուզեր խէրօ՛:
 — Աղջի՛, արե՛, քե՛ նշանեմ.
 — Խամ բարօ՛, ջան բարօ՛, օղորմի քեր խօրկան:
 — Աղջի՛, արե՛, քե՛ կարդեմ,
 — Խամ բարօ՛, ջան բարօ՛, օղորմի քեր խօրկան:

*
* *

Էլայ, գացի չուր մեր Փըլսուս
 Լուեր թափեցան գլխուս.
 Լարեցին զիս, մկնցին զիւս.
 Զթորկեցին գիշեր ընկի լոս
 Էլայ, գացի ջուր մեր Օխլաթ:
 Լուեր էկան օլաթ կօլաթ,
 Վեցն էր պաչով, մէկը պօլատ.
 Վայ զէն լուեր, մետեղ լուեր.
 Փերեքենտու կարմիր լուեր:
 Լուեր էկան կարար—կարար.
 Կը խարցուցին վաշի բարար:
 Վայ զէն լուեր, մետեղ լուեր.
 Փերեքենտու կարմիր լուեր:
 Գիշեր էլան ճըղուերն ի վեր.
 Ցերեկն էլան սներն ի վեր. վայ զէն լուեր ևն:
 Լուերն էկան կոլսրխնճան.
 Լարեցին ձի, կոլսեցին մութ քնճան. վայ ևն,
 Լուերն էկան սև ու դեղին.
 Էկան, մտան մէջ քեր բէղին,
 Լուն ու ճանճ, օչին ու անիծ. վայ. ևն:
 Լուերն էկան լմալ—լմալ.
 Օչի քակեց կնկայ բամալ.
 Լուն ու ճանճ, օչին ու անիծ:

*
* *

Թէ կուզ իմ նը՝ կաքաւ իմ.
 Թէ շիլ իմ նը՝ շիրին իմ.
 Թէ քոնած իմ նը՝ քըրսվ շինած իմ.

Թէ սև իմ նը՝ կռուզ իմ.
 Թէ կօրոտ իմ նը՝ խօրոտ իմ.
 Թէ կէշ իմ նը՝ ատլանի վեհ իմ:
 Երիկ մուռնիմ շորէ շինած՝
 Մէջ պատանին կանի խինած.
 Երիկ մ'ունիմ կուղիկ մուղիկ՝
 Բամ՝ էլ ունի չանց մօղողիկ.
 Կուղեմ էն էլ տամ դրողին,
 Թոնեմ էթըամ խըատ սիրողին:

5.

Ալասկերտի բարբառով

Ալիչաքչաքն ու դիուլուլուն,
 Խօնա կիվիւն 1) ու ֆու պուպուն.
 Ելան գացին վըր խառ բլուն.
 Խառբալ թափ էտուր ուր թերուն.
 Ըսաց.—Եամա՛ն, չզանիկ իմ ձգերուն.
 Կեղնիմ բարար խօնա կիվըուն:
 Ալիչաքչաքն ու դուռլուլուն.
 Ելան գացին վըր լակլըկուն.
 Լակլակ թափ էտուր ուր թերուն.
 Ասաց.—Եամա՛ն, չզանիք իմ ձգերուն.
 Կեղնիմ ջրտըւուր Խօնա կիվըուն:
 Ալիչաքչաքն ու դուռլուլուն.
 Ելան գացին վըր սարեկուն
 Սարեկ թափ էտուր ուր թերուն:
 Ասաց.—Եամա՛ն, չզանիք իմ ձգերուն.
 Կեղնիմ վարդապետ Խօնա կիվըուն:
 Ալիչաքչաքն ու դուռլուլուն.
 Խօնա կիվիւն ու ֆու պուպուն.
 Ելան գացին վըր ճնճղուն,
 Ճնճուղ թափ էտուր ու թերուն.

1) Կիվիւը մարգագետիններու մէջ բոյն կը շինէ. Կեռ ու սուր կտուց ունի յոպոպի մեծութեամբ. զիշերը անցորդի զիսի վերեւը սուր ճիչ հանելով կը դառնայ օդի մէջ հետեւելով նմա, որպէս զի անցորդը յիմանայ բոյնի տեղը. Թռչելու միջոցին (ցերեկը) կը մտնէ մեծ Թռչնոց Թեւերու տակ, կտցահարելով Թեւերը կը կոտորէ, կսպանէ, կասեն:

Ասաց.—Եամս'ն, չղանիք իմ ձգերուն。
Կեղնիմ սարկաւագ Խօնա կիվըւուն.
Ալիշաքչաբն ու գուռլուլուն.
Խօնա կիվիւն ու Տօռ պուպուն.
Եղան գացին վէր խռնկուն.
Խոռունկ թափ էտուր ուր թեերուն.
Ասաց.—Եամս'ն, չղանիք իմ ձգերուն.
Կեղնիմ աերդ Խօնա կիվըւուն.

6.

Մօեցց բարբառակ

ԼՈՒԻ ԵՐԳ

Յէլանք գացինք ջուր մի Մըռճան 1),
Լուեր կայնած կը խըրխընջան.
Զէդ անտէրտանք չեն թորկէ,
Դոր մի նընջամ.
Հաւար լուեր, մադար լուեր:
Յէլանք գացինք ջուր Զարբաշին,
Դէմ առանք լուանու փաշին.
Փախանք մատանք գոմշու կաշին.
Բոնին զոտուիս ու քաշին.
Հաւար լուեր, մադար լուեր:
Յէլանք գացինք ջուր մի Լաթար,
Լուեր էղած դարար—դարար.
Դոր մի մըտնեմ սըրար.
Հաւար լուեր, մադար լուեր:
Լուն ասաց օչու թոռին,
Կէս գիշերին լըծեց կոռին.
Առաւ, ընկաւ մըջ ախոռին.
Հաւար լուեր, մադար լուեր:
Լուն էրաց համալ—համալ,
Օչիլ չառաւ փիլ ու համար.
Անիծ շըռջեց կընկառց թամալ,
Հաւար լուեր, մադար լուեր:

4) Գրի է առել Գ.. Հ.. Ասել է Թորոս Անուշեան, որն էլ սովորած
է Մշու Սոխկոմ գիւղացի Խաչօ Մելոեանից:

7.

Ղարսի նախիջեւան գիւղի բարբառակ 1)

Պառւր ու բըլանք բերին Ղափլուեցիք,
Թողին փախան Բայնդուրցիք.
Քարէ քաքրող Ղոշավանքցիք.
Զամբ (ջրաղացքի փոշի) ուտող Տիկոռցիք.
Զուկ ուտող Մաւրզցիք,
Եղ ու պանիր էնող Ագրկցիք.
Աղուէս բռնող Զալալցիք.
Շուն . . . Սպնեցիք.
Լոշ հաց ուտող Նախջևնցիք 2),
Պաղ ջուր խմող Զըռջւցիք.
Կոտ—կոտ ուտող Բըռկցիք.
Ճատ ուտող Քերուեցիք,
Կախ շալուար Խարեցիք.
Իշու աղբէր Կաղզուընցիք.
Մուրազատուր Բագրնցիք,
Արընքտէր Մաստարեցիք.

8.

Արմօլու գիւղի բարբառակ *)

Ապարանու կալերն հով ա,
Իշուանք տեսանք գիցանք կով ա,
Թան ու մածուն միջուանք ծով ա,
Շէնիկ մնաս, գու Ապարան:
Ապարանու մէկ բան գովանք,
Փէտ ու փարոց, ամրոց ցան ա,
Ինչ որ ցան ա. մկներ տան ա,

1) Ասել է Գէորգ Ներսէսեան Ղարսի նախիջեւան գիւղացի. զրի է առել Գ. Հ.

2) Նիրակայ գիւղացիք էլ Ղարսի նախիջեւանցոց համար ասում են՝ «Քաք ջուր խմող նախջեւնցիք». որովհետեւ մի փօքրիկ առու կայ. որը գալիս է Տիկոռից, ջուրը կեղտոտ. բայց առողջարար. որի ջուրն էլ խմում են տեղացիք. ուր լուանում են շոր, անասուններ ու երեխաներ.

*) Գրի է առել Ա. Հայկունի:

Եէնիկ մնաս, դու Ապարան.

Զրի տեղ կը խմին եղ,

Ցորեն ընկել ա նեղ տեղ.

Ճմով շինած է գեղ.

Եէնիկ մնաս, դու Ապարան:

Ապարանու Մամար թաւար,

Երկու աչքից մէկն ա խաւար,

Ոչ հաց ունի, ոչ էլ ձաւար,

Եէնիկ մնաս, դու Ապարան:

Ապարանու կովն ու կթան,

Խշուանք կը լծեն գութան,

Աղջիկ, տղա, բարե կուտան,

Եէնիկ մնաս, դու Ապարան:



the capital over London. We find
that the Bishopric of Bath and Wells
was given to the Bishop of Winchester
in 1068, and that the Bishop of Bath
was then given to the Bishop of Bristol.
The Bishop of Bristol was given to the
Bishop of Bath in 1088, and the Bishop
of Bath was given to the Bishop of Wells
in 1106, and the Bishop of Wells
was given to the Bishop of Bath in 1154,
and the Bishop of Bath was given to the
Bishop of Bristol in 1191.